


«ՏՕՒՍՑՅԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ»



Լ. Ն. ՏՕՒՍՑՅԵ

ԻՆՉՈՎ, ԵՆ ԿԵՆԴԱՆԻ
Մ Ա Ր Գ Ի Կ

№ 3

ԳՐԱՆԵՔ 10 ԿՈՊ.

891.71

S-80

8908 80. 8 S

891.71

19 NOV 2010

S-80

~~XXXXXXXXXX~~

Л. Н. СОЛУСОВ

Уч

ԻՆՉՈՎ ԵՆ ԿԵՆԴՐԱՆԻ Մ Ա Ր Դ Ի Կ

Թարգմ. Լ. ԴԱՆԻԷԼԵԱՆՑԻ

№ 3



ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Թ. Գ. ՔԼԵՄԵՆՏՆՈՎ
Ի Պ. Օ Դ Ե Ա ԳՐԱԾՈՒՄԱՆ
1911 - ССР А
М. А. МАСЛОВСКАЯ
Ա. ԱՅԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԿԻՎ

75-19731

23 .08. 2013

14093

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿԱԶՄԻ



ԻՆՉՈՎ ԵՆ ԿԵՆՏՐԱԼ ՄԱՐԴԻԿ

I

Մի կօշկակար ապրում էր իր կնոջ ու զաւակների հետ միասին գիւղացու բնակարանում: Նա ոչ սեփական տուն ունէր և ոչ էլ հող, ու պահում էր իր ընտանիքը կօշկակարութեան աշխատանքով: Հացը թանգ էր, իսկ աշխատանքը՝ էժան, և ինչ որ վաստակում էր՝ այն էլ ուտում էին: Մի մուշտակ ունէր կօշկակարը, որը հագնում էին կնոջ հետ միասին փոխ է փոխ. այն էլ մաշուել, ցնցոտիացել էր, և երկրորդ տարին էր արդէն, որ նա պատրաստվում էր ոչխարէ մորթ առնել նոր մուշտակ կարել տալու համար: Աշնանը մի բանի մանէթ փող հաւաքուեց կօշկակարի ձեռքում. երեք մանէթանոց մի թրգթադրամ պահվում էր կնոջ սնդուկի մէջ, մի հինգ մանէթ ու քսան կոպէկ էլ մնում էր գիւղացիների վրայ:

Եւ անա նա մի օր պատրաստուեց վաղ առաւօտեան գնալ գիւղը մուշտակի համար: Հագաւ իր շապիկ վրայից կնոջ, նանկայից կարած ու մէջը բամբակ դրած, կուրական, իսկ նրա վերևիցն էլ մահուդէ կաֆտանը, երեք մանէթա, նոց թղթադրամը վերցրեց զրեց զրպանում, մի հասարակ բարակ փայտ էլ կտորեց ձեռագոյտ

շինեց ու նախաճաշից յետոյ ճանապարհ ընկաւ։ Մտածում էր. «կը ստանամ գիւղացիներէրից հինգ մանէթը, նրա վրայ կը դնեմ մօտս եղած երեքը ու կը գնեմ ոչխարի մորթի մուշտակի համար»։

Կօշկակարը եկաւ գիւղը, մտաւ գիւղացիներէրից մէկի մօտ.—տանը չէ։ Կինը խոստացաւ շաբաթուայ ընթացքում ուղարկել ամուսնուն պարտքը վճարելու, իսկ փող չը տուեց։ Միւսի մօտ մտաւ. գիւղացին երդուեց որ փող չունի։ Միայն քսան կոպէկ տուեց կօշիկները կարկատելու համար։ Կօշկակարը մտածեց պարտքով վերցնել ոչխարէ մորթը։ Մորթէվաճառը չը վստահացաւ ապառիկ տալ։

—Փողերը, ասում էր նա, բեր, այն ժամանակ ընտրիր, որը կամենաս՝ թէ չէ մենք զիտենք ինչպէս են հաւաքվում պարտքերը։

Ու այդպիսով ոչ մի գործ էլ չարեց կօշկակարը. միայն ստացաւ քսան կոպէկ կարկատանի համար, և մէկ էլ վերցրեց մի գիւղացու հին վալենկիները (թաղիքէ ոտնամանները) վրայից կաշի կարելու համար։

Տխրեց կօշկակարը. ստացած քսան կոպէկը տուեց օղու խմեց ու գնաց տուն առանց մուշտակի։ Առաւօտեան եղանակը ցուրտ էր մըսում էր կօշկակարը, մինչդեռ, օղին խմելուց յետոյ՝ տաք էր զգում իրան առանց մուշտակի էլ։ Ճանապարհով գնում էր կօշկակարը, մի ձեռքով ձեռափայտով թխկթրխկացնում սառած փոքրիկ քարերը, իսկ միւս ձեռքով՝ շարժում վալենկիները, ու խօսում ինքն իրան.

—Ես, ասում է, առանց մուշտակի էլ տաք եմ. խմեցի գինին, նա այժմ խաղում է երակներէս մէջ։ Մուշտակ էլ չի հարկաւոր։ Գնում եմ վիշտս մոռացած։ Ահա թէ ինչպիսի մարդ եմ ես։ Քնձ ինչ։ Ես առանց մուշտակի էլ կապրեմ. նա ինձ երբէք էլ չէ հարկաւոր։ Միայն թէ կինս կը վշտանայ։ Վիրաւորական էլ է ախր. դու նրա համար գործ ես կատարում, իսկ նա քեզ դեռ խաբում էլ է։ Դէ լաւ, սպասիր տեսնենք. փողերը. թէ չես բերի՝ ես քու գլխարկը կը հանեմ գլխիցդ։ Աստուած վկայ կը հանեմ։ Ապա թէ ոչ այդ ինչ ասել է։ Քսանական կոպէկով է վճարում։ Դէ լաւ, քսանական կոպէկով ինչ կարող ես անել։ Խմել միայն։ Ասում է. «կարիք ունեմ»։ Դու կարիք ունես, ես կարիք չունեմ միթէ։ Դու տուն ունես, անասուն էլ և ամեն ինչ. իսկ ես ահա հէնց այս եմ որ կամ։ Քո հացը տանու է, այն ինչ իմս՝ առնովի. որտեղից ուզում ես գլխիք, միայն թէ ամեն շաբաթ երեքական մանէթ հանիր ու վեր դիր։ Չէ՛ ախպէր, աւելի լաւ է իմ հասանելիքը տուր ինձ։

Այդպէս կօշկակարը մօտենում է մատուռին, որ գտնվում էր ճանապարհի թեքուելու տեղում, և ուղիղ մատուռի ետևում տեսնում է ինչ որ մի բան սպիտակին է տալիս։ Արդէն սկսել էր մութն ընկնել. կօշկակարը նայում է, բայց չէ կարողանում պարզ տեսնել թէ ինչ բան է։ Մըտածում է. թէ քար է՝ այդ տեսակ քար չը կար այստեղ։ Անասուն է գուցէ։ Բայց անասունի էլ նման չէ։ Դուրսը նման է մարդու գլխի. միայն թէ շատ է սպիտակ։ Սակայն մարդը մի այդպի-

սի ժամանակ ինչ գործ ունի այստեղ:

Մօտեցաւ. բոլորովին պարզ կերպով երևում էր արդէն: Ինչ հրաշք բան. կարծես թէ մարդ է, որջ թէ մեռած, մերկ մարմնով նստած, յենուել է մատուռին, և չէ շարժվում: Սարսափեց կօշկակարը. ինքն իրան մտածում է. «Սպանել են որևէ մարդու, մերկացրել ու ձգել այստեղ: Բաւական է որ մօտենար նրան. յետոյ անկարելի կը լինի ազատուել այլ ևս:

Ու գնաց կօշկակարը մօտով: Հասաւ մատուռի ետևը. մարդը այլ ևս չէր երևում: Անցաւ մատուռը, յետ նայեց ու տեսնում է. մարդը յետ է քաշուել մատուռից, շարժվում է, կարծես թէ դէս ու դէն է նայում: Կօշկակարը էլ աւելի վախեցաւ ու սկսեց ինքն իրան մտածել. «մօտենամ, թէ անցնեմ գնամ: Մօտենամ՝ վայ թէ մի վատ բան դուրս գայ դրանից: Ո՞վ գիտէ ինչ ինչ տեսակ մարդ է նա: Բարի գործերի համար չէ ընկել այստեղ: Կը մօտենաս, նա յանկարծ տեղից վեր կը թռչի ու կը խեղդի քեզ. այն ժամանակ դէ արի ու ազատուիր նրա ձեռքից: Ի՞նչ անել մի այդպիսի մերկ մարդու հետ: Սօս վրբայիցս չէի հանելու վերջին ունեցածս էլ՝ նրան տամ: Աստուած միայն հեռու տանի»:

Եւ քայլերն արագացրեց կօշկակարը: Սկսել էր արդէն անցնել մատուռը, բայց խիղճը յանդիմանեց նրան:

Ու կանգ առաւ կօշկակարը ճանապարհին:

— Ի՞նչ այդ ինչ ես անում Սիմօն, — ասում է ինքը իրան: Մարդը փորձանքի մէջ մեռնում է, իսկ դու վախենում ես ու անցնում մօտից:

Միթէ շատ ես հարստացել: Վախենում ես որ կողոպտեն քո հարստութիւնը: Է՛յ, Սիմօն, լաւ բան չես անում:

II

Յետ դառաւ Սիմօնը և գնաց դէպի մարդը. մօտեցաւ, տընտղեց նրան ու տեսնում է. երիտասարդ, ուժը վրան, մարմնի վրայ շարդուածքներ չկան, միայն երևում է, որ մարդը ցրտահար է եղել ու վախեցել. նստել է գետնին, յենուել ու չէ նայում Սիմօնին, իբրև թէ թուլացել է, աչքերը վեր բարձրացնել չէ կարողանում: Սիմօնը բոլորովին մօտեցաւ, և յանկարծ, կարծես սթափուեց այդ մարդը, գլուխը շուռ տուեց, բաց արեց աչքերը և նայեց Սիմօնին: Հէնց այդ հայեացքիցն էլ մարդը սիրելի դարձաւ Սիմօնին: Գետին ձգեց վախենկիները, գօտեկապը բաց արեց դրեց կօշիկների վրայ, հանեց կաֆտանը: — շերիք է խօսես, — ասում է նա: — Ա՛յ, հագիր: Դէ՛հ...

Սիմօնը բռնեց մարդուն արմուկի տակից ու սկսեց վեր բարձրացնել: Մարդը տեղից վեր կացաւ: Եւ տեսաւ Սիմօնը, որ նրա մարմինը նուրբ է, մաքուր, ձեռքերը կոշտացած, շարդուածք չեն ու դէմքը դուրեկան: Կաֆտանը նրա ուսին ձգեց Սիմօնը: Չէր կարողանում մարդը հագնել թևքերը: Սիմօնը ուղղեց նրա ձեռքերը. ձգեց, վրայ բերեց, փաթաթեց կաֆտանը և գօտեկով լաւ կապեց:

Գլխիցն էլ հանեց իր պատուած կարտուզը, ուզում էր հազցնել նրա գլուխը, բայց վախեցաւ գլուխը մրսի, մտածեց. «իմ ամբողջ գլուխը տկտր է, առանց մազերի, մինչդեռ նա ունի խիտ, երկար գանգուր մազեր»։ ու նորից գլուխը դրեց։

«Աւելի լաւ է կօշիկները հագցնեմ»։ Նստեցրեց նրան ու հագցրեց վալենկները։

Կօշիկալարը հագցրեց նրան ու ասում է.

— Այդպէս ուրեմն, եղբայր։ Հարա, դէ մի դիրար եկ, որ տաքանաս։ Իսկ այդ գործերը բոլորն էլ առանց մեզ կարող են քննել։ Կարող ես քայլել։

Մարդը կանգնել, հիացմունքով նայում էր Սիմօնի վրայ, որևէ բան ասել չէր կարողանում։

— Ինչո՞ւ չես խօսում։ Խօս մայտեղ ձմեռելու չէինք։ Հարկաւոր է տուն գնալ։ Հարա, առահա իմ այս ձեռնափայտը, յենուխը նրան, եթէ թուլացել ես։ Ի՞նչ շարժուիր։

Ու շարժուեց տեղից մարդը։ Գնում են ճանապարհով, ու Սիմօնը ասում է նրան.

— Ումհնցից ես դու։

— Այստեղացի չեմ ես։

— Այստեղացիներին ճանաչում եմ արք...

Ուրեմն ինչպէս պատահեց, որ դու ընկար այստեղ, այս մատուռի մօտ։

— Չեմ կարող ասել։

— Երևի կողոպտել են քեզ։

— Ոչ ոք չէ կողոպտել ինձ։ Աստուած է պատժել։

— Յայտնի բան է. ամեն ինչ Աստուած է

անում։ Բայց և այնպէս մի որևէ տեղ գնալ հարկաւոր է արք։ Իսկ ո՞ր ես գալու։

— Ինձ համար միևնոյն է։

Չարմացաւ Սիմօնը։ Անպիտան մարդու չէ նմանում, և խօսքերովն էլ շատ մեղմ, խաղաղն է, իր մասին չէ ուզում որևէ բան ասել։ Ու մտածում է Սիմօնը թէ՛ ինչեր չէ պատահում աշխարհումս։ Եւ ասում է մարդուն.

— Լաւ ուրեմն, դէ արի գնանք իմ տունը, թէև մի քիչ հեռու պէտք է գնաս։

Գնում է Սիմօնը, օտարականը յետ չէ մընում նրանից. կողք-կողքի քայլում է նրա հետ։ Քամի բարձրացաւ. նա թափանցում էր նրա շապկի տակից՝ մրսացնում նրան, այնպէս որ գինովութիւնը հետզհետէ անցաւ նրանից և նա ցրտից սկսեց մրսել, սրթսրթալ։ Գնում էր նա, քթով փնչացնում, վրայ բերում ու ծածկում իրան կնոջ կուրտուշկայով և մտածում. «Այ քեզ մուշտակ. գնացի մուշտակ բերելու» վերադառնում եմ առանց կաֆտանի և դեռ հետս էլ մերկ մարդ եմ բերում։ Արածս չի գովի Մատրէնան»։

Եւ հէնց որ սկսում էր մտածել Մատրէնայի մասին, երկիւղը պատում էր Սիմօնին։ «Բայց նայում էր օտարականին թէ չէ՛ յիշում էր նրա ձգած հայեացքը իր վրայ մատուռի ետևում, նրա սիրտը սկսում էր ուրախութիւնից վեր-վեր թռչել, խաղալ։

III

Սիմօնի կինը առաւօտ վաղ էր վեր կացել, հաւաքոտել տունն ու տեղը։ Փայտերը կտորել

էր, շուր բերել, երեսայոց կշտացրել: Ինքն էլ նախաճաշել ու մտածում էր թէ երբ հացերը թխի, այժմ, թէ միւս օրը: Հացի մի մեծ կտոր մտում էր դեռ:

— «Եթէ, մտածում էր նա, Սիմօնը այնտեղ ճաշելու լինի, մէկ էլ ընթրիքին շատ չուտենք, էգուցուայ համար էլ հերիք կանի հացը»:

Մատրէնան դէս ու դէն շուռ տուեց, պարտեցրեց հացի մնացորդ կտորը այս ու այն կողմ, ու մտածում է. «հացախմորները այժմ չեմ դնի վառարանում: Առանց այն էլ մի անգամվայ հացի ալիւր է մնացել միայն: Մի կերպ քաշ կը տանք մինչև ուրբաթ»:

Մատրէնան հաւաքեց հացը ու նստեց սեղանի առաջ՝ ամուսնու շապիկը կարկատելու: Կարում է ու մտածում ամուսնու մասին՝ թէ ինչպէս է նա մուշտակի համար ոչխարի մորթ գնելու:

— Չի խարի նրան, արդեօք, մորթէվաճառը: Թէ չէ շատ պարզամիտն է իմ մարդը: Ինքը ոչ ոքի չի խարի, մինչդեռ նրան ամենափոքրիկ երեխան էլ կը խարի: Ո՛ւրթ մանէթ. դա քիչ փող չէ հա: Այդ գումարով, կարելի է լաւ մուշտակ կարել տալ: Եթէ ոչ դարադուածը, բայց և այնպէս, դա էլ մուշտակ է: Անցեալ ձմեռ ինչպէս էինք նեղութիւն քաշում ազանց մուշտակի: Ո՛չ կարելի էր լինում գետակը ջրի գնալ և ոչ էլ մի որևէ ուրիշ տեղ. նոյն իսկ այժմ. անա տնից դուրս է եկել— գնացել, ամեն բան հագել է ինքը, իսկ ես հագնելու ոչինչ չունեմ: Երևա չեկաւ. արդէն գարու ժամանակն է: Չը լինի թէ

քէֆ է անում իմ բազէն»:

Հէնց այդ մտածումները մէջն էր Մատրէնան երբ դրսևում ոտնաձայն լսուեց, սանդուղքները ճրճոացին և մէկը ներս մտաւ: Մատրէնան ասեղը իր տեղը դրեց և դուրս եկաւ նախասենեակը: Տեսնում է. ներս են մտել երկու հոգի. Սիմօնն է, նրա հետն էլ ինչ որ մի գեղջուկ, առանց գլխարկի, վալենկաները ոտներին:

Մարդու բերնից փչող գինու հոտն առաւ իսկոյն Մատրէնան:

«Ըհը՛, մտածում է, հէնց այդպէս էլ է. նա հարբած է»: Նկատեց նոյնպէս, որ նա, առանց կաֆտանի է, միայն կուրտուշկայով, և հետը ուրիշ բան չէ բերել. այլ լուռ, կուշ-կուշ է գալիս, քաշվում: Մատրէնայի սիրտը կսկծաց: Փողերը, մտածում է նա, տարել է խմել, քէֆ արել որևէ պատահական մարդու հետ, բաւական չէ, դեռ նրան էլ հետը բերել է այստեղ:

Ներս թողեց նրանց սենեակը և ինքն էլ հետևներից մտաւ, տեսնում է. օտարական մարդ է, երեսասարդ, նիհար, նրա հագի կաֆտանը իրանցն է: Կաֆտանի տակից շապիկ չէ տեսնում. գլխարկ չկայ: Ներս մտաւ թէ չէ այլ ևս չը շարժուեց տեղից և աչքերն էլ վեր չը բարձրացրեց. իսկ Մատրէնան մտածեց. սա բարի մարդ չէ երևում. վախենում է:

Ունքերը հաւաքեց, մռայլուեց Մատրէնան, քաշուեց վառարանի մօտ ու սկսեց դիտել թէ ինչ դուրս կը գայ նրանցից:

Սիմօնը գլխարկը հանեց, նստեց իր նստարանի վրայ ինչպէս մի խաղաղ, անմեղ մարդ:

—է՛, ասում է, Մատրէնան, պատրաստուիր ընթրիք տալու մեզ:

Մատրէնան ինչ որ փնթփնթաց բթի տակին: Ինչպէս որ կանգնել էր վառարանի մօտ, այնպէս էլ մնացել էր անշարժ կանգնած. մէկ սրան էր նայում, մէկ՝ նրան ու գլուխը օրօրում: Սիմօնը տեսաւ, որ կնոջ տրամադրութիւնը վատ է. բայց ինչ արած. այնպէս ձևացաւ իբրև թէ ոչինչ չէ նկատում, բռնեց օտարականի թևից.

—Նստիր, եղբայր, ասում է, ընթրիք անենք: Օտարականը նստեց նստարանի վրայ:

—Ի՞նչ է. գուցէ բան չես եփել:

Մատրէնան չարացաւ:

—Եփել եմ, բայց ոչ քեզ համար: Դու, ինչպէս տեսնում եմ, խելքդ էլ ես դիտու տուել խըմել: Գնացիր մուշտակ առնելու, վերադառնում ես առանց կաֆտանի, և դեռ ինչ որ մի տկլոր թափառաշրջիկ էլ հետդ ես քաշ տուել բերել: Ձեզ նման հարբեցողների համար ես ընթրիք չունեմ:

—Բաւական է. Մատրէնա. ինչո՞ւ ես գուր տեղից լեզուովդ խայթում: Դու հարցրու նախ և առաջ՝ թէ ինչպիսի մարդ է սա...

—Ասա ինձ, ի՞նչ ես արել փողերը:

Սիմօնը ձեռքը տարաւ կաֆտանի գրպանը, հանեց թղթադրամը ու բաց արեց:

—Փողերը. ահաւասիկ: Իսկ Տրօֆիմովը չը տուեց. խոստացաւ վաղը բերիլ:

Իսա աւելի չարացրեց Մատրէնային. մուշտակ չէ գնել, իսկ վերջին կաֆտանը հագցրել է մի մերկ մարդու, այն էլ իր մօտ բերել:

Շտապով վերցրեց թղթադրամը սեղանի վրայից, տարաւ թագցնելու, ու ասում է.

—Ընթրիք չը կայ: Բոլոր մերկ հարբեցողներին կշտացնել անկարելի է:

—Ա՛խ, Մատրէնա, գոնէ, քեզ պահիր լեզուդ: Նախ՝ լսիր թէ ինչ են ասում:

—Շատ խելօք բան կը լսես հարբած յիմարից: Ախր, գուր չէր որ չէի ուզում քեզ, հարբեցողիդ, հետ ամուսնանալ: Մայրս քաթան տուեց ինձ. դու տարար տուիր խմիչքի-հարբեցիր: Գնացիր մուշտակ առնելու, դարձեալ խմելու տուիր:

Սիմօնը ուզում էր հասկացնել կնոջը բանի էութիւնը. ասել, որ խմելու էր տուել միայն քան կոպէկը, ուզում էր ասել թէ որտեղ էր այդ մարդուն գտել, բայց Մատրէնան ժամանակ չէր տալիս նրան. մի անգամից երկու-երկու խօսք էր ասում: Ինչ որ տասը տարի առաջ պատահել էր, այն էլ մինչև անգամ յիշեց:

Պօսեց, խօսեց Մատրէնան, յարձակուեց դէպի Սիմօնը, բռնեց նրա թևից:

—Տուր, գոնէ, իմ պօղդէօվկան (կապան). թէ չէ այդ մէկն էր մնացել, այն էլ ձեռքիցս առար, ինքդ հագար: Այստեղ տուր, գնդակախորով լինես դու:

Սիմօնը սկսեց հանել իր հագից կուցավէլկան, թառուեց. կինը պինդ քաշեց, կարերը ճրրճրթացին: Մատրէնան վերցրեց իր պօղդեօվկան, ձգեց գլխին ու ձեռքը տարաւ դէպ դուռը: Ուզում էր գուրս գնալ, բայց կանգ առաւ. նրա սիրտը չը դիմացաւ. ուզեց չարութիւնը թողնել և իմանալ՝ թէ ինչ տեսակ մարդ է այդ եկուորը:

IV

Մատրէնան կանգ առաւ ու ասաց.

— Եթէ բարի մարդ լինէր, այդպիսի մերկ չէր լինի. թէ չէ նրա վրայ շապիկ էլ չը կայ. եթէ բարի գործերի համար գնացած լինէիր, դու կասէիր՝ թէ որտեղից ես բերել այդպիսի մի պըճ-նասէրի:

— Այս բոլորէն կասեմ. գալիս էի, մատուռի մօտ նստած էր այս մարդը մերկ, բոլորովին սառել էր: Ամառ չէ ախր, որ մերկ դիմանալ կարողանայ: Աստուած ինձ ուղարկեց դէպի նա, ապա թէ ոչ կորած կը լինէր: Է՛, ինչ անել: Քիչ բաներ չեն պատահում. վերցրի, հագցրի ու այստեղ բերի: Հանգստացրու դու սիրտդ: Մեղք բան է, Մատրէնա: Մեռնելու ենք ախր:

Ուզում էր Մատրէնան մի լաւ հայհոյել, բայց նայեց օտարականին ու լռեց: Նստել է օտարականը, անշարժ. ինչպէս նստել էր նստարանի վրայ, այնպէս էլ մնացել էր: Զեռքերը ծալել է ծնկների վրայ, գլուխը կախել կրծքին, աչքերը չէ բաց անում և շարունակ մոայլովում է, ունքերը հաւաքում, կարծես ինչ որ բան խեղտում էր նրան: Լսեց Մատրէնան:

Իսկ Սիմօնը ասում է.

— Մատրէնա, մի՞թէ դու Աստուած չունես:

Լսեց այդ խօսքը Մատրէնան, մի անգամ էլ նայեց օտարականին, և յանկարծ սիրաբար մեղմացաւ: Հեռացաւ դռան մօտից, մօտեցաւ վառարանի անկիւնին ու վեր առաւ ընթրիքը բերաւ:

Գաւաթը դրեց սեղանի վրայ, կլիսա ածեց, վայր դրեց հացի վերջին կտորը: Բերեց դանակն ու գդալները:

Սփշտեցէք դէ, ասում է:

Սիմօնը առաջ քաշեց օտարականին:

— Սկսիր, ասում է, ղօչադ:

Սիմօնը կտրեց հացը, փրթեց, և սկսեցին ընթրիք անել: Իսկ Մատրէնան նստեց սեղանի անկիւնի մօտ, յենուեց ձեռքերով նրան ու ըսկսեց նայել օտարականին:

Եւ խղճահարուեց Մատրէնան օտարականի վրայ ու սիրեց նրան: Եւ յանկարծ գուարթացաւ օտարականը, դադարեց մոայլուելուց, աչքերը վեր բարձրացրեց, նայեց դէպի Մատրէնան ու ժպտաց:

Ընթրիքը վերջացրին: Հաւաքեց Մատրէնան ու սկսեց հարց ու փորձ անել օտարականին:

— Ի՛է ասա՛, տեսնենք ումո՞նցից ես դու:

— Այստեղացի չեմ:

— Հապա ի՞նչպէս պատահեց, որ ընկար այս ճանապարհի վրայ:

— Չեմ կարող ասել:

— Իսկ ո՞վ բեզ կողոպտեց:

— Աստուած պատժեց ինձ:

— Հէնց այդպէս մերկ էլ պառկած էիր:

— Հէնց այսպէս մերկ էլ պառկել, սառչում էիր: Տեսաւ ինձ Սիմօնը, խղճաց, հանեց իր հագի կաֆտանը ինձ հագցրեց և հրամայեց զալ այստեղ: Իսկ այստեղ դու ինձ կերակրեցիր, խմացրիր, խղճացիր: Տէրն էլ կը փրկէ ձեզ:

Տեղից վեր կացաւ Մատրէնան, վերցրեց

պատուհանից Սիմօնի հին շապիկը, այն, որ կարկատում էր, տուեց օտարականին, գտաւ ուրիշ հագուստ էլ. այն էլ տուեց:

— Առ, անձ. ես տեսնում եմ, որ դու շապիկ էլ չունես: Հագիր ու քնիր, որտեղ որ կը հաւանես. տախտի վրայ թէ վառարանի:

Օտարականը հանեց կաֆտանը, հագաւ շապիկը և զգեստը ու պառկեց տախտի վրայ: Մատրէնան հանգցրեց ճրագը, վեր առաւ կաֆտանը ու բարձրացաւ վառարանի գլուխը:

Ծածկուել էր Մատրէնան կաֆտանի մի ծայրով. պառկել է ու քունը չէ տանում. օտարականը նրա մտքից չէ հեռանում: Հէնց որ մտաբերում է թէ նա կերաւ հացի վերջին կտորը, և էգուցուայ համար այլ ևս ուտելու հաց չէ մնում, հէնց որ միտն է գալիս թէ շապիկն ու զգեստն էլ նրան տուեց, սկսում է տխրել. բայց հէնց որ յիշում էր միևնոյն ժամանակ՝ թէ ինչպէս ժպտաց նա, սիրտը սկսում էր թռվոյալ բերկրանքից:

Երկար ժամանակ չէր կարողանում քնել Մատրէնան, և լսում էր, որ Սիմօնն էլ դեռ քնած չէր. կաֆտանը դէպի իրան էր քաշում:

— Սիմօն!

— Հը:

— Ախր հացի վերջին կտորն էր որ կերաք, իսկ ես նորը չեմ դրել վառարանը: Էգուցուայ համար չեմ իմանում թէ ինչ պիտի անեմ: Թէ կը գնամ Մալանեա սանամօրից կը խնդրեմ:

— Եթէ կենդանի մնացինք, կուշտ էլ կը լինենք:

Կինը պառկեց, լռեց:

— Երևում է, լաւ մարդ է. միայն թէ իր մասին ինչո՞ւ ոչինչ չի ասում:

— Երևի, չի կարելի:

— Սեճմ:

— Հը:

— Մենք խօս տալիս ենք ուրիշներին. բայց ինչո՞ւ մեզ ոչ ոք չի տալիս:

Ձէր իմանում թէ ինչ ասէր Սիմօնը, Ասում է. քաւական է խօսես:

Երեսը միւս կողմը շուռ տուեց ու քնեց:

1376-7

V

Առաւօտեան զարթնեց Սիմօնը: Երեխայքը քնած են, իսկ կինը գնացել էր հարևանների մօտ հաց փոխ առնելու: Միայն երեկուայ օտարականն է բանելու նստարանի վրայ նստել, նայում դէպի վեր: Նրա դէմքը առաջին օրուայ հակառակ՝ աւելի էր պայծառացել:

Եւ ասում է Սիմօնը.

— Հը, ի՞նչ կասես, սիրելիս. փորը հաց է խնդրում, իսկ մերկ մարմինը՝ հագուստ: Կերակրուել հարկաւոր է: Աշխատել կարողանում ես:

— Ես ոչինչ չեմ կարողանում:

Ձարմացաւ Սիմօնը և ասում է.

— Սէր միայն թէ լինէր: Մարդիկ ամեն բան սովորում են:

— Մարդիկ աշխատում են, ես էլ կաշխատեմ:

— Անունդ ի՞նչ է:

—Միքայէլ:

—Դէ՛հ, Միքայէլ, քո մասին ոչինչ չես ուզում ասել. դա քո գործն է, իսկ ուտել հարկաւոր է: Եթէ կանես այն, ինչ որ հրամայեմ, կը կերակրեմ:

—Թող փրկէ քեզ Տէրը, իսկ ես կը սովորեմ: Յոյց անըր, ինչ որ պիտի անես:

Վեր առաւ Սիմօնը չը ոլորուած մումթելը, հագցրեց մատներին և սկսեց պատրաստել ծայրը:

—Դժուար բան չէ, տես...

Նստեց Միքայէլը, ինքն էլ հագցրեց մատներին, իսկոյն սովորեց, պատրաստեց ծայրը:

Սիմօնը ցոյց տուեց նրան՝ թէ ինչպէս պէտք է եփ տալ: Այդ էլ իսկոյն և եթ ըմբռնեց Միքայէլը: Յոյց տուեց տանտէրը նոյնպէս խոզեմագերը ոլորել, հագցնել. դարձեալ անմիջապէս հասկացաւ Միքայէլը:

Ինչպիսի գործէլ ցոյց էր տալիս նրան Սիմօնը, բոլորն էլ իսկոյն սովորում էր նա. այդպիսով երբորդ օրուանից սկսեց աշխատել այնպէս, որ, կարծես, իր ամբողջ կեանքում կարել էր շարունակ: Աշխատում էր առանց մէջքն ուղղելու, ուտում էր սակաւ, ընդմիջվում էր աշխատանքը. նստում էր լուռ և շարունակ գէպի վեր նայում: Փողոց դուրս չէր գալիս, աւելորդ բան չէր խօսում, կատակ չէր անում, չէր ծիծաղում:

Միանգամ միայն նկատեցին թէ ինչպէս նա մպտաց առաջին երեկոն, երբ տանտիկինը ընթրիքն էր բերում:

VI

Անցաւ օր օրի վրայ, շաբաթ շաբաթի վրայ, բոլորեց տարին էլ: Միքայէլը առաջուայ պէս ապրում է Սիմօնի մօտ ու աշխատում: Եւ Սիմօնի բանօրի մասին հոշակ տարածվեց, որ ոչ ոք այնքան մաքուր և ամուր կօշիկ չի կարող կարել, ինչպէս Սիմօնի բանուր Միքայէլը: Եւ այդ շրջանի բոլոր տեղերից սկսեցին Սիմօնի մօտ գալ կօշիկներէ համար, ու Սիմօնի կարողութիւնը սկսեց օրէցօր աւելանալ:

Մի անգամ ձմեռը Սիմօնն ու Միքայէլը նստած աշխատում էին. մօտենում է խրճիթին մի եռածի սայլակ զանգակները զօղանջելով: Նայեցին պատուհանից. սայլակը կանգ առաւ խրճիթի հանդէպ. թուաւ նրա վրայից մի երկտասարդ, բաց արեց գոնակը: Դուրս եկաւ սայլակի միջից մուշտակ հագած մի աղա. Դուրս եկաւ սայլակից, գնաց դէպի Սիմօնի տունը, մտաւ պատշգամբը: Դուրս վազեց Մատրէնան, դռները բոլորովին բաց արեց նրա առաջ: Աղան կռացաւ, մտաւ խրճիթը, ուղղուեց ամբողջ մարմնով այնպէս, որ քիչ էր մնում գ ու լըր առաստաղին հասնէր, ամբողջ անկիւնը գրաւեց:

Տեղից վեր կացաւ Սիմօնը, գլուխ տուեց, զարմանում էր աղայի վրայ. Իր օրում, այդպիսի մարդ նա չէր տեսել: Ինքը Սիմօն տապակվածը, Միքայէլ նիհարաբ, իսկ Մատրէնան աւելի ևս. իբրև չոր տաշեղէին. իսկ դա, կածես մի ուրիշ աշխարհից եկած մարդ լինէր. գէմբը կար-

միր, լիքը, վիշը եզան պարանոցի նման հաստ, ամբողջովին չուզունից լինէր ձուլուած կարծես:

Շունչ քաշեց աղան, հանգստացաւ, հանեց մուշտակը, նստեց նստարանի վրա ու ասաց.

— Ո՞վ է տէր-կօշկակարը:

Առաջ եկաւ Սիմօնը և ասաց.

— Ես, ձերդ բարձրապատուութիւն:

Գոռաց աղան իր փոքրաւորի վրա:

— Է՛յ, Ֆէրկա. այստեղ տուր ապրանքը:

Ներս վագեց փոքրաւորը, բերելով կապոցը:

Աղան վերցրեց կապոցը դրեց սեղանի վրայ.

— Բաց արա, ասում է:

Բաց արեց փոքրաւորը: Մատով հրեց աղան կօշիկի ապրանքը ու ասաց Սիմօնին:

— Է, լսիր դէ ինձ, կօշկակար: Տեսնում ես

ապրանքը:

— Տեսնում եմ, ասում է, ձերդ ազնուութիւն:

— Բայց դու հասկանո՞ւմ ես թէ ինչ ապրանք է սա:

— Սիմօնը շօշափեց ապրանքը և ասաց.

— Ապրանքը լաւն է:

— Բանն էլ հէնց այդ է որ լաւն է: Դու, յիմար, այդպիսի ապրանք դեռ ևս տեսած չըկաս

օրումդ: Ապրանքը գերմանական է. քսան ուրբլի է վճարուած դրան:

— Վախեցաւ Սիմօնը, ասում է:

— Որտեղ պէտք է տեսնէինք մենք:

— Բանն էլ հէնց դրանումն է: Ուրեմն կարող ես դու այդ ապրանքից կօշիկ կարել իմ ոտքերի համար:

— Կարելի է, ձերդ բարձրապատուութիւն:

Գոռաց նրա վրա աղան.

— Չարդ բանէ, որ կարելի է: Դու հասկացիր միայն՝ թէ ում համար ես կարում, և այն էլ ինչ տեսակ ապրանքից: Այնպիսի կօշիկներ կարելի ինձ համար, որ մի ամբողջ տարի հագնեմ՝ չը մաշուեն, չը ծուռեն, չը պատուեն: Եթէ կարող ես. վերցրու, կարելի ապրանքը. իսկ եթէ չես կարողանալու. ո՛չ վերցրու, և ո՛չ էլ կարելի ապրանքը: Առաջուց ասումեմ քեզ, եթէ պատուեն, ծուռեն կօշիկներս տարին լրանալուց առաջ, քեզ բանտ կը նստացնեմ: Բայց եթէ մինչև տարին լրանալը չը ծուռեն, չը պատուեն. ես քո աշխատանքի համար տաս ուրբլի վարձ կը տամ:

Վախեցաւ Սիմօնը և չը գիտէր՝ թէ ինչ ասէր: Նայեց Միքայէլին. արմունգով հրեց նրան ու շնչաց կամաց.

— Ի՞նչ ես ասում, վերցնեմ:

Գլխով արեց Միքայէլը, այսինքն թէ՛ վերցրու գործը:

Սիմօնը լսեց Միքայէլին, վեր առաւ կարելու այնպիսի կօշիկներ, որոնք մինչև տարին լրանալը ոչ ծուռէին, և ոչ էլ պատառուէին:

Չայն տուեց աղան իր փոքրաւորին, հրամայեց հանել իր ձախ ոտքի կօշիկը, ու ոտքը մեկնեց. «չափսը վերցրու»:

Սիմօնը կտրեց տասը վերջով երկարութեամբ մի թուղթ. տափակացրեց, կոկեց. ծունկ չոքեց, գոգնոցով ձեռքերը լաւ սրբեց-մաքրեց, որպէս ղի աղայի գուլպաները չը կեղտոտի, և սկսեց շափել:

Չափեց Սիմօնը աղայի ոտքի տակի մասը,

վերևի մասը, սկսեց չափել ձկնամսերն էլ՝ ճիթքի տեղերը, բայց թուղթը չը բաւականացրեց նրա ոտքերը ձկնամսերի մատում հաստ էին գերացի նման: «Տես, ճիթքերը նեղ չանես հա...» Սիմօնը թղթի մի կտոր էլ սկսեց կարել: Աղան նստել է, շարժում գուլպաների մատանին և նստում խրճիթում եղողներին: Նկատեց Միքայէլին: — Իսկ սա ո՞վ է քեզ մօտ: — Իմ վարպետն է. նա ինքն էլ պիտի կարէ կօշիկները:

— Նայիր ուրեմն, ասում է աղան Միքայէլին, լաւ միտդ պահիր. այնպէս կարիր, որ դիմանայ մի ամբողջ տարի: Սիմօնն էլ երեսը դարձրեց, նայեց Միքայէլին, տեսնում է. Միքայէլը սկի չի էլ նայում աղայի վրայ, այլ կանգնել է աղայի ետևում՝ անկիւնում, կարծես նայում լինի մէկին. նայեց, նայեց Միքայէլը և յանկարծ ժպտաց ու ամբողջովին պայծառացաւ նրա դէմքը:

— Ի՞նչ ես, յիմար, ատամներդ բաց արել: Աւելի լաւ է նայիր, որ ժամանակին պատրաստ լինեն կօշիկները:

Միքայէլը ասում է.

— Իսկ և իսկ հարկաւոր ժամանակին պատրաստ կը լինի:

— Հարա:

Աղան հագաւ կօշիկը, մուշտակը, փեշերը վրա բերեց ու գնաց դէպի դուռը, բայց մոռացաւ գլուխը կուսնել, և գլխով կսլաւ դրան վերնաշեմքին:

Հայհոյեց աղան. գլուխը մի քիչ տրորեց.

ապա նստեց ու դնաց:

Երբ աղան դնաց, Սիմօնը ասում է.

— Համա հաստն է հա: Գլխով վերնաշեմքը նստացրեց, իսկ իրան պատճառած ցուր զիջ էր դեռ:

Իսկ Մատրէնան ասաց.

— Սյնպէս ապրելուց յետոյ՝ էլ ինչու պիտի կոկ չընկնես: Սյգ տեսակ մարդուն մահն էլ չի կարող տանել:

VII

Սիմօնը ասում է Միքայէլին:

— Գործը վերջնելը վերցրինք արդէն, բայց չը լինի թէ դրանով դժբաղտութիւն վաստակենք: Ապրանքը թանգագին է, իսկ աղան բարկացկոտ: Չը լինի թէ սխալուենք: Հարա դու, քո թէ տեսողութիւնն է սուր, թէ ձեռքերդ են իմինից աւելի վարժուել-հմտացել. դէ առ ու չի փիր: Ձևիր ապրանքը, իսկ ես գլուխները կը կարեմ վերջացնեմ:

Ականջ չը դրեց նրան Միքայէլը, վերցրեց աղայի ապրանքը, փոեց սեղանի վրայ, երկուտակ ծալեց, վերցրեց դանակը ու սկսեց ձևել:

Մատրէնան մօտեցաւ նրան. նայում է տեսնի՞ թէ ինչպէս է ձևում Միքայէլը ու գարմանում է նրա արածի վրայ: Կօշկակարութեան գործին Մատրէնան արդէն ընտելացել էր. նայում է ու տեսնում, որ Միքայէլը կօշկակարութեան ձևով չէ ձևում ապրանքը, այլ կտրում է կտրիկ:

Ուզում էր բան ասել Մատրէնան, բայց մէկ էլ ինքն իրան մտածեց.

«Երևի, ես չը հասկացայ՝ թէ ինչպիսի կօշիկներ կարել աղայի համար. երևի Միքայէլը աւելի լաւ գիտէ, հարկ չը կայ խառնուելու նրա գործին»:

Միքայէլը ձևեց գոյգը, վերցրեց և սկսեց կարել ծայրերը ոչ այնպէս ինչպէս կօշկակարներն են կարում երկու ծայրերը միասին, այլ մի ծայրով ինչպէս որ հողաթափներն են կարում:

Այդ բանի վրայ էլ զարմացաւ Մատրէնան, բայց դարձեալ չուզեց մէջ ընկնել, խանգարել: Մինչդեռ Միքայէլը շարունակում էր կարել: Կէսօր դառաւ. վեր կացաւ Միմօնը տեղից, նայում է ու տեսնում, որ Միքայէլը աղայի ապրանքից հողաթափներ է կարել:

Այն քաղեց Միմօնը. «Այդ ինչպէս է որ, մտածում է նա, Միքայէլը մի ամբողջ տարի ապրեց, չէր սխալուել և ոչ մի բանում, իսկ այժմ մի այսպիսի դժբաղտութիւն պատճառեց: Աղան ունտաւոր, երկարաձիթ կօշիկներ պատուիրեց, իսկ նա կարեց հողաթափներ առանց տակի ու ապրանքը փշացրեց: Ինչպէս պէտք է պրծնեմ ես այժմ աղայի ձեռքից: Այդ տեսակ ապրանք՝ չի կարելի գտնել»:

Ու նա դիմում է Միքայէլին.

— Այդ ինչ արիր դու, սիրելի մարդ: Դու ինձ մորթեցիր: Չէ որ աղան կօշիկներ էր պատուիրել, իսկ դու այդ ինչ ես կարել:

Նոր էր նա սկսել ասել այդ խօսքերը Միքայէլին, երբ յանկարծ լուսեց թխկոց. մէկը ծե-

ծում էր դան օղակը: Նայեցին լուսամուտից. ինչ որ մի մարդ եկել էր ձիով և կապում էր ձին: Դուռը բաց արին. ներս է մտնում միևնոյն երիտասարդը, որ եկել էր աղայի հետ միասին:

— Բարև ձեզ:

— Բարև. ինչ էք կամենում:

— Տիրուհիս է ուղարկել կօշիկների համար:

— Ի՞նչ է ասում կօշիկների համար:

— Էլ ինչ պէտք է ասի: այն որ այլ ևս կօշիկ հարկաւոր չէ տիրոջս: Տէրս կեանքը ձեզ քաշխեց:

— Ի՞նչ ես ասում:

Ձեր մօտից դուրս եկաւ թէ չէ, դեռ տուն չը հասած՝ մեռաւ, հէնց, սայլակի մէջ: Սայլակը մօտեցաւ տանը, դուրս եկան վեր բերելու, իսկ նա, տոպրակի նման, թէք էր ընկել ու սառել, մեռած էր. մեծ դժուարութեամբ սայլակից ցած դրին: Դրա համար էլ տիրուհիս ուղարկեց ինձ. ասում է. «Ասա դու կօշկակարին, որ՝ ձեզ մօտ մի աղա էր եկել կօշիկ պատուիրել և ապրանքը թողել. արդ՝ ասա, որ կօշիկ հարկաւոր չէ այլ ևս, թող նոյն ապրանքից շուտով կարի հողաթափներ մեռելի համար: Ու սպասիր մինչև որ կը պատրաստեն և հետդ վերցրու բեր»:

Ահա դրա համար էլ ես եկել եմ:

Միքայէլը վերցրեց սեղանի վրայից ապրանքի մնացորդ կտորները, խողովակի նման փաթաթեց, վերցրեց պատրաստի հողաթափներն էլ, իրար խփեց ու գոգնոցով արբելով տուեց եկուղբին: Մտան վեր առաւ հողաթափները:

— Մնաք բարեաւ. բարի սհաթի վրին:

VIII

Անցաւ մի տարի էլ, երկրորդ տարին էլ Միքայէլը արդէն վեցերորդ տարին էր գնում որ ապրում էր Միմօնի մօտ: Ապրում էր առաջուայ նման: Ո՛չ մի տեղ չէր գնում, ո՛չ մի աւելորդ խօսք չէր արտասանում և ամբողջ ժամանակամիջոցում երկու անգամ միայն ժպտաց, սի անգամը այդ այն ժամանակն էր, երբ կինը պատրաստվում էր նրան ընթրիք տալու առաջին երեկոն: Իսկ միւս անգամը՝ աղայի վրայ: Իր բանւորի վրայ Միմօնը երբէք չէ նեղանում: Եւ չէ էլ հարցնում նրան այլ ևս՝ թէ որտեղից է նա. միայն վախենում է, որ չը լինի թէ հեռանայ իր մօտից Միքայէլը: Նստած են մի անգամ տանը: Տանտիրուհին չուզուէնքը դնում էր վառարանի մէջ, իսկ երեխանքը խանութում դէս ու դէն էին վազվզում, լուսամուտից նայում դուրս: Միմօնը ջիտակար է անում մի լուսամուտի մօտ, իսկ Միքայէլը միւսի մօտ կրունկն է պատրաստում:

Խանութի միջով վազեց տղան դէպի Միքայէլը, յենուեց նրա ուսին ու սկսեց նայել լուսամուտից:

— Միքայէլ հօրեղբայր. հալա մի տես. վաճառականի կինը իր աղջիկներով չը լինի մեզ մօտ է գալիս: Աղջիկներից մէկն էլ կաղիկ է:

Տղան այդ ասաց թէ չէ, Միքայէլը թողեց ձեռքի գործը, շուտ եկաւ դէպի լուսամուտը և սկսեց նայել փողոց:

Միմօնը զարմացաւ: Առաջներում Միքայէլը երբէք չէր նայում փողոց, իսկ այժմ լուսամուտին է կպել ու նայում է ինչ որ մի բանի: Միմօնն էլ նայեց դէպի լուսամուտը. տեսնում է, իրաւ որ մի կին գալիս է դէպի իրանց. բակը, հագնուած է մաքուր, մուշտակով, խալիչանման թաշկինակ կապած, երկու աղջկերանց ձեռքերից բռնած բերում է իր հետ: Աղջկերքը իրար ախքան են նման, որ տարբերել իրարից անկարելի կը լինէր: Միայն մէկի ձախ ոտքը վընասուած էր, գալիս էր կաղալով: Կինը պատշգամբով բարձրացաւ նախասենեակը, շոշափեց դուռը և բաց արեց: Նախ սենեակը մտան երկու աղջկերքը, ապա նրանց յետևից էլ ինքը:

— Բարև ձեզ, տանտէրեր:

— Բարի եկաք, ներս համեցէք: Ի՞նչ էք կամենում:

Կինը նստեց սեղանի մօտիկ. Աղջկերքը սեղմուեցին նրա ծնկներին, մարդկանցից քաշվում էին:

— Ահա այս աղջկերանց համար դարնանային կաշուէ մաշիկներ պիտի կարել:

— Ի՞նչ կայ որ, կարելի է: Թէև այդպիսի փոքրիկների համար մենք մինչև այժմ չենք կարել, բայց կարող ենք. Կարելի է ռանտաւոր և առանց ռանտի: Ահա Միքայէլը իմ վարպետն է:

Աչքերը ուղղեց Միքայէլի վրայ Միմօնը ու տեսնում է. Միքայէլը թողել է գործը, նստել լուռ և աչքը աղջկերանցից չէ հեռացնում:

Միմօնը զարմացաւ Միքայէլի վրայ: Այնպիսի և աղջկերքը լաւերն էին. սև աշիկներով,

իբրը դէմքով, կարծրերես, նրանց հագի մուշ-
տակներն ու աղուխներն էլ լաւը, բայց և այն-
պէս Միմօնը չէր կարողանում հասկանալ՝ թէ
ինչու նա այնպէս շատ նայում է նրանց, կար-
ծես, նրանք ծանօթ լինէին նրան:

Զարմացաւ Միմօնը ու սկսեց նորեկ կնոջ
հետ խօսել— գինը որոշել: Գինը վերջացրեց, վեր-
ցրած չափսը ծախեց: Գինը գրկեց կաղիկին, նըս-
տեցրեց իր ծնկանը և ասաց.

— Ահա սրա ոտքերի համար երկու չափս
վերցրու. ծուռ ոտիկի համար մէկ մաշիկ կարիւր,
ուղիղ ոտի համար էլ երեքը: Երկուսի ոտքերն
էլ միատեսակ են. բոլորովին իրար նման: Սրանք
երկւորեակներ են:

Միմօնը վերցրեց չափսը և ասում է կաղի-
կի մասին.

— Ինչից պատահեց այդ: Այդպիսի լաւ աղ-
ջիկ: Ծնունդիցն է այդպէս, ի՞նչ է:

— Ո՛չ, մայրն է ընկել վրան, այդպէս արել:
Մէջ ընկաւ Մատրէնան. ուզում է իմանալ՝
թէ դա ում կինն է եղել և ում երեխաներն են
նրանք, ու ասում է.

— Իսկ դ՞ու մի՞թէ նրանց մայրը չես:

— Ես նրանց մայրը չեմ և ոչ էլ նրանց ազ-
գականը, տիկին, բոլորովին օտարներ են ինձ.
որդեգիրներս են:

— Բո երեխաները չեն, մինչդեռ ինչքան
խղճում ես նրանց:

— Ինչպէս չը խղճամ նրանց. երկուսին էլ
ստիներիս կաթովն եմ ծիծ առել, կերակրել-մեծա-
ցրել: Ես էլ զաւակ ունէի, բայց Աստուած խլեց

նրան տարաւ. նրան այնքան չէի ափսոսում,
ինչքան սրանց եմ ափսոսում:

— Ա՛խր, այդ ո՞ւմ երեխաներն են:

IX

Գինը սկսեց խօսել և պատմեց հետևեալը:

Սրանից, ասում է, վեց տարի առաջ պա-
տահած բան է. մի շաբաթուայ մէջ այդ որբերը
գրկուեցին ծնողներից. հօրը թաղեցին երկուշաբ-
թի օրը, իսկ մայրը մեռաւ ուրբաթ: Երեք օր
էր մնացել որ ծնուէին, երբ գրկուեցին նրանք
հօրից, իսկ մայրը ծննդաբերութիւնից յետոյ մի
օր էլ չապրեց: Այդ ժամանակ ես ամուսնուս
հետ միասին ապրում էի գիւղումը: Մեզ հետ
նրանք հարեաններ էին. ապրում էինք գրկից:
Սրանց հայրը մեծակ մարդ էր, աշխատում էր
անտառում: Մի օր այնպէս պատահեց որ ծառը
կտրելիս ընկաւ նրա վրայ ու ջախջախեց մէջ
տեղից: Հագիւ տուն հասցրին թէ չէ հոգին
Աստծուն բաշխեց, իսկ նրա կինը՝ միկնոյն շա-
բաթ երկունքով ազատուեց ջուխտակ ու բերաւ
ահա այս աղջիկները: Աղբատութիւնը մի կող-
մից, մեծակութիւնը միւս կողմից, մի կին ու-
նէր միայն. ո՛չ պառաւ, ո՛չ աղջիկներ:

Մենակ ծննդաբերեց, մեծակ էլ մեռաւ:

Միւս առաւօտը գնացի տեսնելու հարեա-
նուհուս. գալիս եմ խրճիթը ու տեսնում, որ
խեղճ կինը արդէն սառել է: Եւ երբ մեռնելիս
է լինում՝ ընկնում է աղջկայ վրայ: Ահա սրան

տակովն է անում. ոտքը դուրս ձգում: Հաւարուեց ժողովուրդը: լողացրին, դազող շինեցին, թաղեցին: Ամեն բան բարի մարդիկ են անում: Մնացին աղջկերբը մենակ. ի՞նչ անել նրանց: Իսկ կանանցից ես էլ միայն ծծկեր երեխայ ունեցողը: Առաջնակ տղայ զաւակիս ութերորդ ամիսն էր որ կերակրում էի: Ժամանակաւորապէս ես վերցրի նրանց ինձ մօտ պահելու: Հաւարուեցին գիւղացիները. մտածեցին, մտածեցին թէ ինչ անեն նրանց, ու ասացին ինձ. «Մարիա, ոտ մի առ ժամանակ էլ պահիր աղջկերանցը, ըեզ մօտ, իսկ մենք, ժամանակ տուր, որ նրանց մասին մի բան մտածենք...»: Իսկ ես մի անգամ ձիծ տուի անմաս աղջկանը, իսկ այս տակովն արածին կերակրել էլ չուղեցի: Չէի կարծում որ կարող է պարել: Ու ինձ ու ինձ մտածում էի. «Խըր ինչու պէտք է այդ հրեշտակային հոգեակը տանջուի. նրան էլ խղճացի: Սկսեցի կերակրել և այդպէս իմ մինուճարին ու այդ երկուսին երեքին միասին ծծերովս կերակրեցի: Երիտասարդ էի. ոյժ կար ստացած սնունդս էլ լաւ էր: Աստուած էլ այնքան կաթ տուեց, որ երբեմն ինքն իրան ծորում էր: Երբեմն երկուսին կերակրում էի, իսկ երբորդը սպասում էր, թէք է ընկնում մէկը երբորդն եմ վերցնում: Եւ այդպէս այնպէս տնօրինեց Աստուած, որ դրանց կերակրեցի պահեցի, իսկ իմինիս երկրորդ տարեկանում թաղեցի: Այնուհետև Աստուած այլ ևս զաւակ չը տուեց ինձ: Իսկ կարողութիւնս սկսեց աւելանալ: Ահա այժմ ապրում եմ այստեղ շաղպում վաճառականի մօտ: Ռոճիկը մեծ է, ապրուստը

լաւ: Իսկ երեխաներ չըկան: Եւ ինչպէս կարող էի ապրել մենակ, եթէ այս աղջկերբը չը լինէ ին: Ախր ինչպէս չը սիրեմ ես սրանց: Միայն թէ սրանք ինձ մօտ սպիտակ մոմեր լինեն կարծես:

Մի ձեռքով սեղմեց կինը կաղիկ աղջկանը իր կրծքին, իսկ միւսով սկսեց սրբել իր այտերի վրայից սահող արտասուքները:

— «Երևում է դուր չէ ասում արածը, առանց հօր-մօր կարող են ապրել զաւակները, բայց առանց Աստուծոյ ապրել չեն կարող»:

Այդպէս փօսեցին նրանք իրար մէջ: Վեր կացաւ կինը գնալու ճանապարհ դրին տանտէրերը նրան, ու նայեցին Միքայէլին: Վերջինս նստել էր ձեռքերը ծալել ծակներէ վրայ ու նայում դէպի վեր, ժպտում:

X.

Միմօնը մօտեցաւ նրան «Այդ ինչ է պատահել ըեզ Միքայէլ: Միքայէլը վեր կացաւ նստարանի վրայից, վեր դրեց ձեռքի գործը, բաց արեց գոգնոցը, գլուխ տուեց տանախրոջն ու տանախրուհուն և ասում է.

— Ներեցէք ինձ, տէրերս: Աստուած ինձ ներումն շնորհեց: Ներեցէք դուք էլ:

Ու տեսնում են տէրերը, որ Միքայէլից լոյս է գալիս:

Ոտքի կանկնեց Միմօնը, գլուխ խոնարհեց Միքայէլի անաջ և անաց նրան:

— Ես տեսնում եմ Միքայէլ, որ դու հասարակ մարդ չես. չեմ կարող ես քեզ պահել, ու չեմ կարող ես քեզ հարցնել, ինձ ասա մի բան միայն. ինչո՞ւ, երբ ես քեզ գտայ ու բերի տունըս, դու մռայլ էիր, իսկ երբ կինս ընթրիք տուեց՝ դու ժպտացիր նրա վրայ ու այն ժամանակուանից սկսած դու դարձար աւելի զուարթագէմ, ուրախ: Ապա՝ երբ այն աղան կօշիկներ էր պատուիրում՝ դու ժպտացիր երկրորդ անգամ և ահա այն օրուանից էլ աւելի՝ ես պայծառացել: Այժմ էլ երբ կինը այստեղ էր բերում երկու աղջիկներին, դու ժպտացիր երրորդ անգամը, ու բոլորովին փայլեց դէմքդ: Ասա ինձ, Միքայէլ, ինչո՞ւ է քեզանից այդպիսի լոյս գալիս, և ի՞նչու դու ժպտացիր երեք անգամ:

Միքայէլը պատասխանեց.

— Նրա համար է լոյս գալիս ինձանից, որ ես պատժուած էի, իսկ Աստուած ներեց ինձ: Իսկ ժպտացի երեք անգամ այն պատճառով, որ ես պէտք է իմանայի Աստուածային երեք խօսքը: Ու ես իմացայ Աստուածային այդ խօսքերը. մի խօսքը ես իմացայ այն ժամանակ, երբ քո կինը խղճաց ինձ վրայ. դրա համար էլ ես ժպտացի առաջին անգամ: Երկրորդ խօսքը ես իմացայ, երբ հարուստ աղան կօշիկներ էր պատուիրում, և երկրորդ անգամ ժպտացի, այժմ էլ, երբ ես տեսայ այդ աղջկերանցը, իմացայ վերջին, երրորդ խօսքը, ու ժպտացի երրորդ անգամ:

Այն ժամանակ Միմօնը հարցրեց.

— Ասա ինձ, Միքայէլ, ի՞նչ բանի համար պատժեց քեզ Աստուած, և որո՞նք են Աստծոյ

այն խօսքերը, որպէսզի ես էլ իմանամ նրանց: Ու Միքայէլը ասաց.

— Աստուած պատժեց ինձ նրա համար, որ չհնազանդուեցի Իրան: Ես հրեշտակ էի երկնքում և չհնազանդուեցի Աստծուն:

Ես հրեշտակ էի երկնքում, և Տէրը ուղարկեց ինձ մի կնոջ հոգին առնելու թոյլ ես երկիրը, և ինչ էմ տեսնում. պառկած է միայնակ մի կին, հիւանդ, երկւորեակ է ծննդաբերել, երկուսն էլ աղջկերք: Նրանք շարժվում են մօր կողքին և մայրը չէ կարողանում նրանց իր ստիճաններին մօտեցնել: Տեսա ինձ այդ կինը թէ չէ հասկացաւ, որ Աստուած ուղարկել է իր հոգին առնելու, լաց եղաւ և ասաց. «Աստծոյ հրեշտակ. ամուսնուս նոր թաղեցինք. ծառը ընկաւ նրա վրայ սպանեց: Ո՛չ քոյր ունեմ ես, ոչ մօրաքոյր և ոչ էլ տան. որբերիս պահող մեծացնող ոչ ոք չունիմ: Դու մի առնիր իմ հոգին. թոյլ տուր որ ես ինքս անձամբ հոգամ զաւակներին մասին, խմեցնեմ նրանց, կերակրեմ, ստքի կանգնեցնեմ: Երեխաները առանց հօր, առանց մօր չեն կարող պարել: Եւ ես լսեցի մօր ասածներին ու մի աղջկանը մօտեցրի նրա կրթքին, միւսին տուի մօր ձեռքը, իսկ ինքս բարձրացայ երկինք Տիրոջ մօտ: Տիրոջ մօտ թոյլ սույն յայտնեցի, որ չրկարողացայ ծննդկանի հոգին առնել: Հօրը ծառը վեր ընկնելիս՝ սպանել էր, մայրը երկւորեակ է ծնել և աղերսում է չառնել իր հոգին, ասում է. «Թոյլ տուր, որ ես ինքս երեխաներիս խմացնեմ, կերակրեմ ուսնու»

քի կանգնեցնեմ. Երեխաները չեն կարող առանց հօր և առանց մօր ապրել: Ես չառայ ծննդկանի հոգին:

Իսկ Տէրը ասաց. «Գնա առ ծննդկանի հոգին և այն ժամանակ դու կիմանաս երեք խօսք. կիմանաս թէ ինչ կայ մարդկանց մէջ, ինչ բան վիճակուած չէ մարդկանց և ինչով են կենդանի մարդիկ. Երբ որ իմանաս՝ կը վերադառնաս երկիրք. Յետ թրայ ես, իջայ երկիր և ծննդկանի հոգին ասայ:

Նորածինները մօր կրծքից բաժանուեցին. Ընկաւ մահճակալի վրայ մեռած մարմինը. իր տակնոն արեց աղջկերանց մէկին և ահա դուրս ընկաւ նրա ոտիկը: Վերասլացայ ես գիւղի վրայ, ուզում էի հոգին տանել Աստծուն յանձնել, բայց քամին բռնեց ինձ, թևերս թուլացան, կախուեցին ընկան, և կնճ հոգին միայնակ վերասլացաւ Աստծոյ մօտ, իսկ ես վայր ընկայ երկիր՝ ճանապարհի մօտիկ:

XI

Այդ ժամանակ միայն հասկացան Սիմօնն ու Մատթէան՝ թէ ումն էին նրանք հազրել ու կերակրել, և ով էր նրանց հետ ապրողը, ու նրանք լաց եղան ահից և ուրախութիւնից: Իսկ հրեշտակը ասաց նրանց.

— Եղ մնացի դաշտում մերկ ու մնասկ: Առաջ ես չը գիտէի մարդկային կարիքն ինչ

բան է. չէի իմանում ինչ ասելէ ցուրտը, քաղցը, և դարձայ մարդ: Սովածացայ, ցրտից բոլորովին սառչում էի և չը գիտէի ինչ անել: Տեսայ ես որ դաշտում մի մատուռ կայ շինուած. Աստծոյ համար. մօտեցայ Աստծոյ այդ մատուռին. ուզում էի պատուարվել այնտեղ. Մատուռը փակուած էր փականքով. անկարելի էր ներս մտնել: Եւ ես նստեցի մատուռի յետևում, որպէսզի պաշտպանվեմ ցրտից: Վրա հասաւ երեկոն, քաղցածացայ ես ու սառեցի. ամբողջ մարմնով տանջվում էի: Յանկարծ լսում եմ ճանապարհով գալիս է մի մարդ, կօշիկները ձեռքին, խօսում է ինքն իր հետ: Առաջին անգամն էր որ ես տեսնում էի մարդկային մահկանացու դէմքը այն օրուանից յետոյ՝ երբ ես մարդ դարձայ, և այդ դէմքը սարսափելի էր ինձ համար, երեսոս դարձրի նրանից: Եւ ես շտում էի, որ այդ մարդը խօսում է ինքն իրան՝ թէ ինչպէս անէ, որ իր մարմինը ծածկէ ձմեռուայ ցրտից, ինչպէս կերակրէ կնոջը, երեխաներին: Մտածեցի. ես այնտեղ մեռնում եմ ցրտից ու քաղցածութիւնից, իսկ այդ մարդը գնում է ու միայն մտածում թէ ինչպէս անի որ իրան ու կնոջը մուշտակ հագցնէ ու հացով կերակրէ: Նա չէ կարող օգնել ինձ: Այդ մարդը տեսաւ ինձ, կնճոտովեց, մոայլվեց, աւելի ևս սարսափելի դարձաւ ու անցաւ իմ մօտից: Եւ սկսեցի ես վհատուել, յանկարծ լսում եմ. յետ է դալիս մարդը: Նայեցի նրան ու չը ճանաչեցի: Նա կարծես առաջուայ մարդը չը լինէր, այն ժամանակ յանձին նրա ներկայանում էր մահը:

իսկ այժմ յանկարծ կարծես կենդանացաւ նա և յանձինն նրա եւ ճանաչեցի Աստծուն: Նա մօտեցաւ ինձ, հազցրեց, վերցրեց իր հետ ու բերաւ իր տունը: Եկայ նրա տունը, մեզ դիմաւորեց մի կին և սկսեց խօսել: Կինը մարդուցն աւելի էր սարսափելի. մեռեալ շունչն էր բղխում նրա բերնից, և ես չէի կարողանում ազատ շունչ քաշել մահուան այդ հեղձուցիչ գարշահոտութիւնից: Նա ուզում էր արտաքսել ինձ դէպի սառնամանիքը, և ես գիտէի որ նա կը մեռնի անպատճառ եթէ արտաքսելու լինի: Եւ յանկարծ նրա ամուսինը յիշեցրեց նրան Աստծոյ մասին: Ու երբ նա մեզ ընթրիք տուեց, իսկ ինքը կանգնած դիտում էր. ինձ, ես նայեցի նրա վրայ. նրանում այլ ևս չկար մահը նա կենդանի էր և ես ի դէմս նրա ճանաչեցի Աստծուն:

Ահա այդ ժամանակ մտաբերեցի ես Աստուծոյ առաջին խօսքը. «Կիմանաս՝ թէ ինչ կայ մարդկանց մէջ»: Եւ ես իմացայ, որ մարդկանց մէջ կայ սէր: Ու ես ուրախացայ այն բանի համար, որ Աստուած արդէն սկսեց ասել ինձ այն ինչ որ խոստացել էր, և դրա համար էլ ժպտացի առաջին անգամ: Սակայն բոլորը դեռ ևս չէի բողացել իմանալ: Ես չը կարողացայ հասկանալ. ինչ բան չէ վիճակուած մարդկանց, և ինչով են կենդանի մարդիկ:

Սկսեցի ես ապրել ձեզ մօտ, ապրեցի մի տարի. եկաւ մի մարդ կօշիկներ պատուիրելու, այնպիսի կօշիկներ, որ կարելի լինի հագնել մի ամբողջ տարի, ոչ մաշուեն պատուեն, և ոչ էլ

ծուռեն: Ես նայեցի նրան ու յանկարծ նրա ուսերի ետևում տեսայ իմ ընկերոջը՝ մահուան հրբշտակին: Ոչ ոք, ինձանից բացի, չէր տեսնում այդ հրեշտակին, բայց ես ճանաչում էի նրան, և գիտէի, որ արևը դեռ ևս մայր չը մտած այդ հարուստի հոգին առնուած կը լինի արդէն: Ու ես մտածեցի. «մարդը իր համար ամբողջ տարուայ պատրաստութիւն է տեսնում, մինչդեռ չը գիտէ, որ կենդանի չէ մնալու մինչև երեկոյ»: Եւ ես յիշեցի այդ ժամանակ Աստծու միւս խօսքը. «Կիմանաս՝ թէ ինչ բան չէ վիճակուած մարդկանց»:

Թէ ինչ կայ մարդկանց մէջ, ես այդ արդէն գիտէի: Իմացայ այն ևս թէ ինչ բան չէ վիճակուած մարդկանց: Մարդկանց վիճակուած չէ իմանալ թէ ինչ բան է հարկաւոր իրանց մարմնի համար: Եւ ահա այդ ժամանակ ես ժպտացի երկբոլոր անգամ: Ուրախացայ և այն բանի համար, որ տեսայ իմ ընկեր հրեշտակին, և նրա համար, որ Աստուած ինձ յայտնեց միւս խօսքն էլ:

Բայց և այնպէս ես բոլորը դեռ ևս չէի կարողացել հասկանալ: Դեռ ևս չէի կարողացել հասկանալ թէ ինչով են կենդանի մարդիկ: Եւ ահա ես ապրում էի ու սպասում թէ երբ պիտի պարզէ ինձ Աստուած իր վերջին խօսքը: Վրայ վեցերորդ տարին եկան երկւորեակ աղջիկները կնոջ հետ միասին, ճանաչեցի աղջկերանց, և իմացայ նոյնպէս թէ ինչպէս էին կենդանի մնացել այդ աղջկերբը: Իմացայ այդ ու մտածեցի. «Մայրը խնդրեց իր երեխաների համար, և ես հաւա-

տացի մօրը, կարծում էի թէ՛ անանց հօրն ու մօրը երեխաները ապրել չեն կարող. մինչդեռ անա օտար մի կին կերակրեց, մեծացրեց նրանց»։ Եւ երբ այդ կինը գթաշարժուեց օտարի երեխաների վրայ ու լաց եղաւ, ես նրա մէջ տեսայ կենդանի Աստծուն ու հասկացայ՝ թէ ինչով են կենդան մարդիկ։ Ու իմացայ, որ Աստուած դրանով ինձ յայտնեց վերջին խօսքը և ներեց ինձ։

Ահա այդ ժամանակ ես ժպտացի երրորդ անգամ։

XII

Եւ մերկացաւ հրեշտակի մարմինը, ամբողջապէս լուսով զուգուեց, այնպէս որ աչք չէր կարող նայել նրան, և խօսեց նա բարձրաձայն իբրև թէ՛ այդ ձայնը ոչ թէ՛ նրանց մօտիցն էր լսւում, այլ գալիս էր երկնքից։ Հրեշտակը ասաց.

— Ես իմացայ, որ ամեն մի մարդ կենդանի է ոչ թէ՛ իր մասին հոգալով, այլ՝ սիրով։

Մօրը վիճակուած չէր իմանալու թէ՛ ինչ բան է հարկաւոր իր երեխաներին կեանքի համար։ Վիճակուած չէր հարուստին իմանալու թէ՛ ինչ էր իրան իսկապէս հարկաւոր։ Եւ վիճակուած էլ չէ ոչ մի մարդու իմանալ իրան կենդանի մնացողի կօշիկներ են հարկաւոր, թէ՛ մեռածի հոգաթափներ երեկոյեան դէմ։

Ես մնացի կենդանի, երբ մարդ էի, ոչ թէ

նրա համար, որ ես ինքս էի այդպէս որոշել, այլ շնորհիւ նրա, որ մի անցորդ մարդու և նրա կրնոջ սրտում կար սէր, և նրանք խղճացին ու սիրեցին ինձ։ Որքերը կենդանի մնացին ոչ թէ՛ նրա համար, որ նրանք այդպէս ցանկացան, այլ որովհետև օտար կնոջ սրտում սէր կար, և նա խղճաց, սիրեց նրանց։ Եւ առնասարակ բոլոր մարդիկ էլ կենդանի են ոչ թէ՛ նրա շնորհիւ, որ իբրանք այդպէս են ցանկանում, այլ որովհետև մարդկանց սրտերում սիրոյ զգացմունք կայ։

Առաջ ես գիտէի, որ Աստուած կեանք է տուել մարդկանց, և կամենում է որպէս զի նրանք ապրեն. այժմ ես հասկացայ մի ուրիշ բան էլ։

Ես հասկացայ, որ Աստուած չէր կամենում, որպէս զի մարդիկ ապրեն ջոկ-ջոկ, անհաշտ և ապա չը պարզեց նրանց այն՝ թէ ինչ է հարկաւոր ամեն մէկին իրա համար, այլ ուզում էր որպէս զի նրանք ապրեն միասին, համերաշխ. և յետոյ արդէն պարզեց նրանց այն՝ թէ ինչ է հարկաւոր նրանց բոլորին՝ իրանց ու ամենքի համար։

Ես հասկացայ այժմ, որ մարդկանց թւում է միայն՝ թէ իրանք կենդանի են մնում իրանց հոգատարութեան շնորհիւ, բայց իրօք կենդանի են նրանք շնորհիւ միայն սիրոյ։ Ով սիրում է, նա սիրում է Աստծուն և Աստուած էլ նրան է սիրում. որովհետև Աստուած ինքը սէրն է։

Եւ երգեց հրեշտակը փառաբանութեան երգ Աստծուն. նրա ձայնից ցնցուեց խրճիթը, յետ

բաշուեց առաստաղը, և երկրի վրայից բարձրացաւ հրեղէն մի սիւն, հասաւ մինչև երկինք: Գետին ընկան Սիմօնը իր կնոջ ու երեխաների հետ միասին: Հրեշտակի թիկունքի վրայ բացուեցին թևեր և նա երկինք վերացաւ:

Եւ երբ ուշքի եկաւ Սիմօնը, խրճիթը առաջուայ դրութեան մէջն էր, իսկ խրճիթի ներսում, բացի իր ընտանիքի անդամներից, այլ ևս ուրիշ ոչ ոք չը կար:



13.769